*Ձոնված՝ Ներսես Արքեպիսկոպոս Պոզապալյանի քահանայական ձեռնադրության 35-ամյակին:*

## ՏԵՍԻԼՔ ՄՇՏԱՎԱՌ

Ժառանգել եմ մի տեսիլք և պահում այն իմ սրտում,
Տեսիլք դարերից եկող, երջանկությամբ պարուրող,
Տեսիլք լույսի շողերով և օրհնությամբ հավերժող,
Հրաշալի մի տեսիլք, բառերով չբացատրվող:

Այն տեսիլքն է փառավոր՝ Սուրբ Գրիգորից ավանդվող,
Որ շողում է դարերով իբրև մի ջահ լուսաշող,
Սրտերն ընծա առինքնող, լույս հավատով շաղկապող,
Տեսիլքն Որդուն Միածին, շքեղ էջքով փառահեղ:

Եվ տեսիլքն այն հմայող, վեհությամբն իր ինձ գերեց,
Բերեց հեռվից մայր հողին ու ինձ ծառա է դարձրեց,
Կարգել է ինձ լուսարար, լույսին, փառքին երկնային,
Աղոթասաց պահապան՝ սիրույն, էջքին հայրական:

Սուրբ Գրիգորն է մերթ ընդ մերթ, իջնում երկնի բարձունքից,
Բուրվառովն իր խնկարկում, առատ շնորհ է բաշխում,
Այցելում է ամեն տուն, սրբագործում այն, մաքրում
Եվ աղոթում և օրհնում քերքը արդար մայր հողի:

14.05.96 թ. Ներսես Վանական